



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 23 ՄԱՅԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 84

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ ԵՐԹԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ

Ինչ սիրելի է փաճարդ, Ամենակալ Տէր.
ամբողջ հոգիով կը ցանկամ եւ կը փափաքիմ
գաւիթներուդ մէջ բնակիլ, Տէր:
Միրքս ու մարմինս ցնծութեամբ
կ'օրհներգեն քեզ, անմահ Աստուած:
Երանի անոնց, որ փանըդ մէջ կը բնակին,
որովհետեւ անդադար քեզ պիտի օրհնեն:
Երանի անոնց, որոնց դուն ես օգնականը:
Երանի անոնց, որոնք սրտանց կը փափաքին քու փաճարդ ուխտի ելլել:
Հազիւ անոնք կ'անցնին Տրամութեան Հովիտէն,
չոր հովիտը ովասիսի կը վերածուի,
որովհետեւ աշնանային անձրեւները օրհնութեամբ կ'ողողեն զայն:
Կը նախընտրեմ գաւիթիդ մէջ իմ անցուցած մէկ օրս,
քան թէ հազար ուրիշ օրեր՝ գաւիթէդ դուրս ապրուած:
Որովհետեւ Տէր Աստուած մեր արեգակն ու վահանն է.
շնորհք ու փառք Տէրը կու տայ,
եւ ռեւէ բարիքէ չի զրկեր անոնք՝
որոնք ամբիժ կեանք կը կ'ապրին:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 12:12-31)



ՄԵԿ ՄԱՐՄԻՆ՝ ԲԱԶՄԱԹԻՒ ԱՆՂԱՄՆԵՐՈՎ (12:12-26)

Որպեսզի Պօղոս Առաքեալ կարենայ իր միտքը ասելի պարզ ու յսրակ ձեռով բացատրել, կ'օգտագործե՞մ մարդկային մարմինը, որպես օրինակ ըսելով. «**Ինչպես մարմինը զանազան անդամներով մեկ ամբողջությամբ է, բոլոր անդամները միասին մեկ մարմին կը կազմեն, նոյնպես է նաև Քրիստոս: Որովհետև մենք բոլորս նոյն Հոգիով մկրտուեցանք, մեկ մարմին կազմելու համար, եւ ամենքս ալ նոյն Հոգիէն խմեցինք**» (12-13 հմբ): Հեղափոխականօրէն, Պօղոս Առաքեալ այսպէղ «Եկեղեցի» բառի փոխարէն «Քրիստոս» կ'օգտագործե՞մ, ըսելու համար թէ հաւատարմները պարզապէս շէնքի մը անդամը չեն, այլ՝ կը պարկանին Քրիստոսի, եւ Քրիստոս որպէս Գլուխը: Ուրեմն անդամները կապուած են այդ Գլուխին, այնպէս ինչպէս մարդու մարմինին անդամները կապուած են ու կը կառավարուին գլուխով: Ուստի մէկուրթիւնը, մեկ ամբողջական ըլլալը Քրիստոսի պարկանելու, նոյն Հոգիով մկրտուելու եւ նոյն Հոգիէն խմելու: Յաճախ Սուրբ Հոգին պարկերացուած է որպէս աղբիւր, հետեւաբար Անկէ խմել կը նշանակէ սրանալ Սուրբ Հոգին:

Այնպէս ինչպէս մարմինին մէջ ամեն մեկ անդամ իր փեղը եւ իր դերը ունի կապարելիք: Ուստի չի կրնար անդամ մը ըսել թէ ես նուազ կարեւոր եմ այս մարմինին մէջ: Եւ այս դասաւորումը Աստուած Ինք փնտրեցա՞մ է: «**Աստուած անդամներէն իրաքաջնիւրը դրաւ մարմինին մէջ, այնպէս՝ ինչպէս ինք կամեցաւ**» (18 հմբ): Մա կը նշանակէ, որ Աստուած այնպէս սրեղծեց մարմինը որպէս զանազան անդամներով ներդաշնակ եւ ոչ թէ միաձեռ: Այս զանազան անդամները կ'աշխատեն մեկ նպատակի համար՝ մարմին պահպանման: Մակայն, ոչ մէկը դժգոհելու կամ հպարտանալու իրաւունք ունի: Որովհետև բարձրի կամ ցածի, անհրաժեշտ կամ երկրորդականի հարց չկայ, բոլորն ալ պէտք են մարմին համար: Անոնք արժէք են մարմին մէջ, անկէ դուրս անարժէք: Այս բացատրութեամբ եթէ դիտենք Եկեղեցւոյ կեանքը եւ դրուածքը, կը նշանակէ Եկեղեցւոյ մէջ ինչ փեղ կամ դիրք որ ունինք Աստուծոյ կողմէ նշանակուած ենք, ոչ թէ մեր նմանները հաճոյացնելու, այլ՝ Աստուծոյ ծրագիրը իրագործելու:

«**Աչքը չի կրնար ձեռքին ըսել՝ ”Քեզի պէտք չունիմ”:** Ոչ ալ գլուխը ոտքերուն՝ թէ ”Ձեզի պէտք չունիմ”» (21 հմբ): Առաքեալը այս արտայայտութեամբ կ'ուզէ անդրադառնալ անոնց, որոնք իրենք զիրենք ասելի բարձր կը նկատէին իրենց ունեցած պաշտօններով կամ շնորհներով: Որովհետև «**Մարմինին ամենէն փկար կարծուած անդամները ամենէն կարեւորներն են: Այն անդամները որ ամենէն անարգը կը համարենք՝ անոնց ասելի պարի կ'ընծայենք, եւ ամօթոյք նկատուած մեր անդամները ասելի պարկեշտութեամբ կը ծածկենք: Աստուած ինք է որ այդպէս կազմած է մարմինը, որպէսզի անդամները իրարու հանդէպ նոյն հոգածութիւնը ունենան**» (22-25 հմբ): Նոյնպէս ալ Եկեղեցւոյ մէջ իրարու հանդէպ նոյն հոգածութիւնը ունենալու:

«**Եթէ մարմինին մեկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին, իսկ եթէ մեկ անդամը պարտուրոյի՝ բոլոր անդամներն ալ միասին կ'ուրախանան**» (26 հմբ): Նոյնպէս Եկեղեցւոյ անդամներուն պարագային:

ԴՈՒՔ ԶՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ ԷՔ (12:27-31)

«**Թէպէտ առանձին-առանձին անդամներ էք, բայց միասնաբար կը կազմէք Քրիստոսի մարմինը**» (27 հմբ): Ուրեմն դուք առանձին չէք, ու չէք կրնար առանձին ալ մնալ:

Այնպէս ինչպէս մարդու մարմին պարագային Աստուած ինք սրեղծեց եւ ըստ այնմ փնտրեց անդամները, ինչպէս Ինք կամեցաւ, նոյնպէս ալ «**Այդ մարմինին, այսինքն՝ եկեղեցիին մէջ Աստուած բազմաթիւ անդամներ կարգեց՝ զանազան ծառայութեանց համար. նախ՝ առաքեալներ, մարգարէներ, ուսուցանողներ, հրաշագործ գործութիւն ունեցողներ, բժշկելու շնորհք ունեցողներ, ուրիշներուն օգնելու ընդունակներ, վարչական կարողութեամբ օժտուածներ, յափշտակութեան մէջ լեզուներ խօսողներ, եւ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու արակ մարդիկ**» (28 հմբ):

Այո, կորնթացիները կը ձգտէին լաւագոյն շնորհները ունենալու, բայց ըստ երեւոյթին իրենց չափանիշը ուրիշ էր: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ ցոյց պիտի փայ որն է այն լաւագոյն շնորհը որուն պէտք է ձգտել: «**Ձգտեցէք հասնիլ այն շնորհներուն, որոնք լաւագոյնն են**» (31 հմբ): Լաւագոյն շնորհներ, որոնք օգտակար են ընդհանուրին, համայնքին եւ ոչ թէ անձին: Ուրիշ բան մը, որ հեղափոխական է: Այո փութը, բաշխողը Աստուած Ինք է, Սուրբ Հոգին է, Տէրը Ինք է, բայց նաև կայ հաւատարմներու բաժինը, այսինքն՝ ձգտելու լաւագոյնին: Այլ խօսքով, մեր կողմէ պարտաւարականութիւնը ընդունելու շնորհները, եւ ըստ այնմ զանոնք օգտագործելու ի փառս Աստուծոյ եւ ի շինութեան հաւատարմութեան: Այսպէղ «լաւագոյն»ը թէ շնորհներուն կապուած, եւ թէ լաւագոյն ճամբան ճշմարիտ քրիստոնէայ ըլլալու, եւ թէ այդ շնորհները լաւագոյն ձեռով օգտագործելու: Մէրը: